

Տարածաշրջանային բիզնեսի կլաստերավորման մոտեցումները և կլաստերային քաղաքականության մշակման առանձնահատկությունները

Մուվարյան Արզիկ Մ.

Կառավարման և բիզնեսի ամբիոնի վարիչ, տ.գ.թ., պրոֆ.

Հայ-Ռուսական համալսարան (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0000-0003-3854-1307>

arzik.suvaryan@rau.am

Մանուկյան Իզաբելլա Կ.

Կառավարման և բիզնեսի ամբիոն, 3-րդ կուրսի սասլիդանտ, դասախոս

Հայ-Ռուսական համալսարան (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0000-0001-7025-2359>

m.ibella.k@gmail.com

ՀՏԳ՝ 338.24; EDN: YQOCYC; JEL: O30

DOI: 10.58587/18292437-2025.1-193

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ կլաստեր; տարածաշրջանային կլաստեր; տարածաշրջանային բիզնեսի կլաստերավորում; տարածաշրջանային զարգացում; պետական քաղաքականություն; պետական կլաստերային քաղաքականություն; կլաստերի ձևավորման մոտեցումներ; պետական մրցունակություն; ռազմավարություն; բիզնեսի կլաստերավորման ռազմավարություն

Подходы к кластеризации регионального бизнеса и особенности формирования кластерной политики

Суварян Арзик М.

Заведующий кафедрой управления и бизнеса, д.э.н., проф.

Российско-Армянский университет (Ереван, РА)

Манукян Изабелла К.

Кафедра управления и бизнеса, аспирант 3-его года обучения, преподаватель

Российско-Армянский университет (Ереван, РА)

Аннотация. Принимая во внимание высокую значимость бизнес-кластеров в повышении конкурентоспособности современных стран, а также учитывая возрастающие возможности, которые предоставляет кластеризация бизнеса для улучшения различных экономических показателей государств, на сегодняшний день актуальным становится изучение вопросов того, как создаются и впоследствии управляются кластеры, и какую роль играют государственные процессы в формировании и координации кластеров. В рамках данной исследовательской работы рассмотрена значимость региональной бизнес-кластеризации; изучены и сравнены ключевые различия между подходами к созданию кластеров; рассмотрено значение кластерной политики в контексте государственной политики; изучено и визуализировано место кластерной политики во взаимодействии с региональной, инновационной и научно-образовательной политиками. В ходе проведения исследования была установлена связь между подходами к кластеризации бизнеса и государственной кластерной политикой.

Ключевые слова и словосочетания: кластер; региональный кластер; региональная бизнес-кластеризация; региональное развитие; государственная политика; государственная кластерная политика; подходы к формированию кластеров; конкурентоспособность государства; стратегия; стратегия кластеризации бизнеса

Approaches to Regional Business Clustering and Peculiarities of Cluster Policy Development

Suvaryan Arzik M.

Head of the Department of Management and Business, Doctor of Economics, Prof.

Russian-Armenian University (Yerevan, RA)

Manukyan Izabella K.

Department of Management and Business, 3rd year PhD student

Russian-Armenian University (Yerevan, RA)

Abstract. Considering the high importance of business clusters in enhancing the competitiveness of modern countries, as well as taking into account the growing opportunities that business clustering offers for improving various economic indicators, it has become increasingly relevant to study how clusters are created and subsequently managed, as well as

the role that government processes play in the formation and coordination of clusters. This research examines the importance of regional business clustering, compares and analyzes key differences in approaches to cluster creation, and explores the significance of cluster policy within the broader context of government policy. Additionally, the interaction of cluster policy with regional, innovation, and scientific-educational policies is analyzed and visualized. During the study, a connection was identified between approaches to business clustering and government cluster policy, highlighting the interdependence of these factors in fostering economic development.

Keywords & phrases: cluster; regional cluster; regional business clustering; regional development; state policy; state cluster policy; approaches to cluster formation; state competitiveness; strategy; business clustering strategy

Կլաստերները իրենցից ներկայացնում են բազմաչափ համակարգեր, որոնց մեջ ներգրավված բիզնես-ներկայացուցիչները՝ ձեռնարկությունները, հնարավորություն են ստանում համատեղելու մրցակցությունը և համագործակցությունը: Իր ճկունության շնորհիվ, կլաստերային կառուցվածքը կարող է իրականացնել շուկայի ընդլայնում (market expansion), ինչը նպաստում է կլաստերի ճանաչելիության բարձրացմանը և կարող է ապահովել երկարաժամկետ տնտեսական աճ: Հարկ է նշել, որ տարածաշրջանների զարգացման ապահովումը կլաստերների ստեղծման հիմնական նպատակներից է:

Ի սկզբանե հիմնված Մեծ Բրիտանիայում, Իտալիայում ԱՄՆ-ում և սկանդինավյան երկրներում, կլաստերային տեսությունը և պրակտիկան այսօր զարգացել է այնքան, որ կլաստերները ներկայումս հանդիսանում են որպես տնտեսական զարգացման շարժիչ ուժ բազմաթիվ եվրոպական ու ասիական երկրների համար: [1; 2]

Լայն տարածում են ստացել տարածաշրջանային կլաստերները՝ դրանք այն կառուցվածքներն են, որոնք իրենց մեջ ներառում են նույնական կամ հարակից տնտեսական ոլորտների սուբյեկտներին, մասնավորապես փոքր և միջին ձեռնարկություններին, որոնց ուշադրությունն ուղղված է նորարարության ստեղծման վրա: Երկրների տարածքային զարգացման քաղաքականությունը արդի պայմաններում ավելի շատ հիմնվում է տարածաշրջանային

կլաստերների զարգացման վրա, քանի որ գիտատեխնոլոգիական զարգացման արդի պայմաններում նորարարական հենքի վրա տնտեսական զարգացում հնարավոր է ապահովել համակարգային ժամանակակից տեխնոլոգիական զարգացման մակարդակ ունեցող կլաստերների միջոցով, որոնք իրենց մեջ ներառում են գիտական, հետազոտական զարգացած միավորներ: Նման նորարարական հիմքի վրա ձևավորված տարածաշրջանային կլաստերները հնարավորություն են տալիս ապահովել ոչ միայն առանձին ճյուղերի և ոլորտների, այլ նաև տարածաշրջանային տնտեսության ամբողջական զարգացումը: Դա նաև հնարավորություն է տալիս արմատավորել որակի միջազգային ստանդարտներ, կենտրոնացնել զգալի ֆինանսական միջոցներ, ներդնել նոր ժամանակակից տեխնոլոգիաներ ու վերջապես դուրս գալ միջազգային շուկա:

Նորարարական հիմքի վրա ձևավորված տարածաշրջանային կլաստերները հատկապես խիստ կարևոր է Հայաստանի Հանրապետության տնտեսության համար, քանի որ այն հիմնականում կենտրոնացված է Երևան քաղաքում, իսկ տարածաշրջանների տնտեսական զարգացման մակարդակը զգալիորեն ցածր է: Աղյուսակ 1-ում համեմատվում են տնտեսվարողների կողմից արտադրված ապրանքների ու մատուցված ծառայությունների ծավալը (շրջանառությունը) ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի ու տնտեսվարողների չափերի 2022 թ. (մլն.դր.):

Աղյուսակ 1. ՀՀ մարզերի և Երևան քաղաքի տնտեսվարողների շրջանառությունը (ըստ տնտեսվարողների չափերի) 2022 թ., մլն.դր.

	Գերփոքր (1)	Փոքր (2)	Միջին (3)	(1)+(2)+(3)	Խոշոր
Արագածոտն	52,609.1	24,079.8	24,393.5	101,082.4	-
Արարատ	140,185.0	80,125.5	58,856.7	279,167.2	213,927.0
Արմավիր	151,935.5	88,341.0	46,973.8	287,250.3	90,632.7
Գեղարքունիք	66,913.5	35,785.0	3,439.3	106,137.8	2,793.1
Լոռի	101,971.0	41,448.9	21,614.6	165,034.5	46,871.5
Կոտայք	210,108.7	131,945.5	256,679.9	598,734.1	131,642.2
Շիրակ	93,682.2	58,745.7	28,176.3	180,604.2	7,028.7
Սյունիք	85,244.8	83,690.8	28,833.9	197,769.5	463,339.6
Վայոց Ձոր	24,976.9	13,111.4	5,773.5	43,861.8	18,851.1
Տավուշ	52,006.9	21,909.5	6,972.8	80,889.2	12,219.5
ք. Երևան	2,213,651.2	1,419,191.1	1,872,160.4	5,505,002.7	2,075,666.6

Աղբյուր՝ մշակված է ըստ [3]

Այս պայմաններում Հայաստանի Հանրապետության մարզերի տնտեսական զարգացման համար անկյունաքարային խնդիր է դառնում կլաստերների զարգացումը, հաշվի առնելով կոնկրետ մարզերի առանձնահատկությունները:

Պրակտիկայում գոյություն ունեն և կիրառվում են կլաստերավորման հետևյալ հիմնական մոտեցումները՝ վերևից ներքև, ներքևից վերև և կոմբինացված [4]: Դիտարկենք դրանք ստորև:

Վերևից ներքև մոտեցումը

Տվյալ մոտեցման բնորոշ առանձնահատկությունն այն է, որ այն իրականացնելիս կլաստերի ստեղծման գաղափարը և դրա կենսունակությունը պահպանելու հետագա պատասխանատվությունը ավելի մեծ չափով պատկանում է պետությանը: Տարբեր երկրների պետական կառույցները ստեղծում և պարբերաբար թարմացնում են կլաստերային բիզնեսի զարգացման միջոցառումների, սկզբունքների և մեթոդների շարքերը, որոնք ի վերջո կազմում են կլաստերային բիզնեսի կառավարման մշակույթի գլխավոր մասը: Բիզնեսի կլաստերավորումը վերևից ներքև մոտեցմամբ առաջին անգամ իրականացվել է ԱՄՆ-ում:

Ներքևից վերև մոտեցումը

Համաձայն տվյալ մոտեցումը՝ կլաստերի ստեղծման և դրա հետագա համակարգման գաղափարը բխում է ձեռնարկատերերից, այսինքն՝ բիզնես ոլորտի ներկայացուցիչներից: Մոտեցումը հնարավորություն է տալիս ապահովել ընկերությունների միջև ավելի կայուն կապեր, ինչպես նաև ձեռնարկությունների միջև ավելի ակտիվ կոորդինացիա: Բացի այդ, այն դեպքերում, երբ կլաստերի ստեղծման առաջարկը բխում է հենց ձեռնարկություններից, բիզնես-սուբյեկտների համար աճում է և՛ կլաստերին միանալու մոտիվացիան, և՛ դրա մասում գործունեությունը շարունակելու պատրաստակամությունը: Մոտեցումն ի հայտ եկավ սկանդինավյան երկրներում, և այսօր հաճախ օգտագործվում է հենց այնտեղ:

Կոմբինացված մոտեցումը

Սույն մոտեցման փիլիսոփայությունը կայանում է բիզնեսի և պետական սեկտորի ներկայացուցիչների միջև շահերի հավասարակշռության ապահովման մեջ: Մոտեցման հիմնական առավելությունը ֆինանսական և այլ տեսակի պատասխանատվության բեռը որոշ մասնակիցներից մյուսների վրա ճկուն տեղափոխելու հնարավորությունն է: Հիմնական թերությունը կլաստերի անդամների միջև կապերի ցրված բնույթն է. չնայած, որ կոմբինացված մոտեցումը ենթադրում է իրավական աջակցություն կլաստերի նպատակների իրականացման համար, գոյություն ունի վտանգ, որ դժվարությունների դեպքում մասնակիցները կփորձեն վերաբաշխել իրենց մեջ առաջացող խնդիրների լուծման


հարցերը, ինչն իր հերթին կարող է հանգեցնել աշխատանքի որակի նվազմանը:

Անկախ նրանից, թե ինչ մոտեցում է կիրառվում տարածաշրջանային բիզնեսի կլաստերավորման համար, ցանկացած երկրում կարևորագույն դեր ունի *կլաստերային քաղաքականությունը* և դրա մշակումը:

Պետական քաղաքականության մեջ կլաստերային քաղաքականության դերը հասկանալու համար, դիտարկենք և ամփոփենք դրա մշակման գոյություն ունեցող մոտեցումների առանձնահատկությունները:


Համաձայն ավանդական մոտեցմանը, կլաստերային քաղաքականությունը կազմում է պետական քաղաքականության մասը. դա որոշիչ ուղղությունն է տնտեսության ամենահեռանկարային ճյուղերի կլաստերավորման ռազմավարությունները մշակելու և իրականացնելու համար [5]:

Ավանդական մոտեցումը ենթադրում է, որ կլաստերային քաղաքականությունը կարելի է դիտարկել որպես գերհամակարգ այնպիսի փոխկապակցված ենթահամակարգերի համար, ինչպիսիք են՝ տարածաշրջանային, ինովացիոն և գիտակրթական քաղաքականությունները: Սույն մոտեցումը սխեմատիկ կերպով պատկերված է Նկար 1-ում:



Նկար 1. Կլաստերային քաղաքականության մշակման ավանդական մոտեցումը
Աղբյուր՝ հեղինակային մշակում

Համաձայն ոչ ավանդական (Օ. Մովկելի) մոտեցմանը [6], կարելի է փաստել, որ կլաստերային քաղաքականությունը ներկայացվում է որպես ավելի ցածր կարգի համակարգ: Տվյալ մոտեցումը սխեմատիկ կերպով պատկերված է Նկար 2-ում:



Նկար 2. Կլաստերային քաղաքականության մշակման ոչ ավանդական մոտեցումը Ադրյուք՝ մշակված է ըստ [6]

Ըստ տվյալ ոչ ավանդական մոտեցմանը, կլաստերային քաղաքականությունը կարող է օգտագործվել որպես գործիք, որը թույլ է տալիս նորովի ձևակերպել պետական տարածաշրջանային, ինովացիոն և ձեռնարկատիրական քաղաքականությունները:

Այսպիսով, կարելի է փաստել, որ կլաստերային քաղաքականությունը մրցունակ ռազմավարություն ստեղծելու և իրականացնելու գրավականներից է: Կախված երկրի կլաստերավորման ընդհանուր փորձից և տնտեսության մրցունակությունից, կլաստերային քաղաքականությամբ կարող է նույնիսկ որոշվել, թե վերոնշյալ երեք մոտեցումներից որը հնարավոր կլինի կիրառել առավել հեռանկարային արդյունք ստանալու համար:

Եզրակացություն

Ամփոփելով վերոշարադրված ուսումնասիրությունը, ներկայացնենք մի շարք եզրակացություններ:

- Ժամանակակից բիզնեսի դինամիկ զարգացման համար պահանջվում են ճկուն ռազմավարություններ և շարունակական կատարելագործման պայմաններ: Սույն անհրաժեշտությունը բարձր արդիականություն ունի տարածաշրջանային բիզնեսի զարգացման համար, որը բազմաթիվ երկրներում ապահովվում է կլաստերների ստեղծման միջոցով:

- Հանդիսանալով տարածաշրջանային տնտեսական աճի գրավականներ, կլաստերային կառուցվածքները ներառում են այն անդամներին, որոնք պատրաստակամ են համատեղելու մրցակցությունն ու համագործակցությունը:

- Կլաստերը կարող է ստեղծվել գոյություն ունեցող երեք մոտեցումներից որևէ մեկով: Դրանք են. վերևից ներքև, ներքևից վերև ու

կոմբինացված մոտեցումները: Կարևորագույն տարբերությունը կայանում է նրանում, թե որ կողմերը (բիզնեսը, թե պետությունը, կամ բիզնեսը և պետությունը իրար հետ) ստանձնում են կլաստերի ձևավորման ու հետագա զարգացման ռիսկերի ու պատասխանատվության ամենամեծ բաժինը:

- Բոլոր այն երկրներում, որտեղ ձևավորվում և զարգանում են տարածաշրջանային կլաստերներ, որոշիչ դեր է կատարում կլաստերային քաղաքականությունը: Այն, ըստ ավանդական մոտեցմանը, կարելի է դիտարկել որպես փոխկապակցված տարածաշրջանային, ինովացիոն և գիտակրթական քաղաքականությունների գերհամակարգ, իսկ ըստ ոչ ավանդական մոտեցմանը կարող է օգտագործվել որպես գործիք՝ պետական տարածաշրջանային, ինովացիոն և ձեռնարկատիրական քաղաքականությունները վերաձևակերպելու համար:

- Տարածաշրջանային բիզնեսի կլաստերավորման մոտեցման ընտրությունը մեծ հաշվով կախված է երկրում մշակված կլաստերային քաղաքականությունից, որի հիմքում պետք է դրվեն կոնկրետ տնտեսական շրջանների, մասնավորապես՝ ՀՀ-ում մարզերի տնտեսության գոյություն ունեցող կառուցվածքը, նյութական և տեխնոլոգիական, բարձրորակ մասնագետների ներգրավման ռեսուրսային հնարավորությունները, տնտեսության գիտատեխնոլոգիական մակարդակի բարձրացման պայմանները և այլն, ինչպես նաև հարկ է հաշվի առնել համաշխարհային առաջավոր փորձը: Հեղինակները իրենց գիտական աշխատանքներում մշակել են կլաստերների ստեղծման մի շարք մոտեցումներ ինչպես ՀՀ տնտեսության, այնպես էլ միջազգային փորձի օգտագործմամբ [7; 8; 9].

Օգտագործված գրականության ցանկ

1. Gilbert, B.A., Li, Y., Velez-Calle, A. et al. A theoretical model of values and behaviors that shape technology region emergence in developing contexts. // Small Bus Econ 55, 2020, pp. 179–191, URL: <https://doi.org/10.1007/s11187-019-00137-w>
2. Kowalski, A.M. & Mackiewicz, M. Commonalities and Differences of Cluster Policy of Asian Countries; Discussion on Cluster Open Innovation. // J. Open Innov. Technol. Mark. Complex. 2021, URL: <https://doi.org/10.3390/joitmc7010021>
3. Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում, Վիճակագրական տեղեկագիր առ 2023 թ. https://www.armstat.am/file/article/sme_bul_2023_a_m.pdf
4. Wolfe, D. & Gertler, M. Clusters from the Inside and Out: Local Dynamics and Global Linkages. // Urban Studies, 41, 2004, pp. 1071-1093, URL: <http://dx.doi.org/10.1080/00420980410001675832>

5. **Nishimura, J., & Okamuro, H.** Subsidy and networking: The effects of direct and indirect support programs of the cluster policy. // *Research Policy*, 40, 2011, pp. 714-727
6. **Ketels, C.H., Lindqvist, G., & Sölvell, Ö.** Cluster Initiatives in Developing and Transition Economies. 2006.
<https://www.hhs.se/contentassets/f51b706e1d644e9fa6c4d232abd09e63/cisdevelopingtransitionmay06.pdf>
7. **Suvaryan A., Manukyan I.** Analysis of Regional Potential as an Aim to Develop SME Cluster Specializing in Recreation Based on the Case of the Republic of Armenia. // *Sciences of Europe*. №50-3 (50). 2020. URL: <https://cyberleninka.ru/article/n/analysis-of-regional-potential-as-an-aim-to-develop-sme-cluster-specializing-in-recreation-based-on-the-case-of-the-republic-of>
8. **Манукян, И.** От цифровой трансформации до инновационной кластеризации МСП в регионах Республики Армения. // *Вестник Российско-Армянского университета: гуманитарные и общественные науки*. Издательство РАУ (43), №4, Ереван, 2022, с. 65-77, doi: https://doi.org/10.48200/1829-0450_sh_2022_4_65
9. **Manukyan, I.** Formation and management of regional agri-food clusters in developing countries: case of “AgroTransilvania” (Romania). // *Management of Sustainable Development Sibiu, Romania*, Volume 13, No. 2, December 2021, doi: <https://doi.org/10.54989/msd-2021-0014>

Сдана/Հանձնվել է՝ 14.12.2025

Рецензирована/Գրախոսվել է՝ 21.01.2025

Принята/Ընդունվել է՝ 28.01.2025